ՄՏԱԾՈՒԹԻՒՆ․

Ապրել և խաբել, և կեղծաւորել,
Միշտ անարգ գործել և ստախօսել,
Վաղուան օր նոյնպէս, ինչպէս որ այսօր, —
Ո՞րտեղ ոյժ գտնեմ այս կեանքի համար:
Ապագան մութ է. իւրաքանչիւր օր
Մի է և նոյն է և է նոյնպէս չար:
Ո՜հ, կեանք անիծված, զզուելի՜ որքան, —
Արդ երբ կանչէ քեզ մթին գերեզման․․

ԻՇԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ.

Դարեւոր փորձերով ապացուցված անհակառակելի մի ճշմարտութիւն է, որ մի ազգ կրթվելու, զարգանալու, ճշմարտապէս լուսաւորվելու համար երկու միջոց ունի. ուսումնարան եւ պարբերական հրատարակութիւններ, (լրագիր, ամսագիր): Առաջինը մանուկներին, վերջինները հասուն մարդիկների համար: Այս հնամի ճշմարտութիւնը, որ ասիական ազգերէ ոմանք, իրանց կրօնի շնորհով տակաւին կհալածեն, հայ ազգը սկզբից ճանաչել, յարգել եւ սիրել է: ճշմարիտ է, Հայաստանի աշխարհագրական դիրքը մեծապէս վնասեց հայկական ազգի ընդհանրական զարգացմանը, ճշմարիտ է, հայ ժողովուրդը արիական ցեղերի գրեթէ հանապազօրեայ տառապակութեան եւ արշաւանքի առիթով շատ յետ մնաց ընդհանուր ազգային լուսաւորութեան շաւղէն, սակայն ճակատագրի այս հարուածը չկարողացաւ խլել Հայի բնածին յատկութիւնները ի չիք դարձնել: Ասիայի ազգերի մէջ, որ մինչեւ այսօր յայտնեալ կրօնների մէջ ամենէն գերագանց, մարդկութեան ընդհանրութեան ճշմարիտ նպատակող, նորա իրաւունքի հաւասարութիւն, ազատութիւն, ընկերական միութիւն շնորհող, քրիստոնէական կրօնէն կարողացաւ շահվիլ, այդ միակ հայ ազգն էր: Այս ազգը կարծես յատկապէս ընտրված էր եւ է մարդկային իրաւունքի հաւասարութիւն չխոստովանող կրօններէ ժառանգաբար հալածվելու եւ տանջվելու, եւ սորանով ժամանակով լուսաւորութեան եւ քրիստոնէական կրօնի կարապետ լինելու Ասիայի մէջ:

Այս եւ սորա նման յոյսեր կարծվին հայ ազգի վերայ նայելով նորա բնածին հակումը եւ սիրոյն դէպ ի կրթութիւնը եւ դէպ ի ընդհանուր մարդկային զարգացումը: Այս սէրը եւ հակումը տակաւ առ տակաւ արծարծվելով աշխարհի ամենայն անկիւնները ցրուած հայ ժողովրդի մէջ եւ ընդհանրանալու շաւղին մէջ մտնելով ներկայ Վեհափառ, ժողովրդասէր Կաթուղիկոսի Աթոռակալութեան օրով սասցաւ եւ կստանայ իւր կանոնաւոր ընթացքը: Վկայ են հայաբնակ քաղաքների եւ գիւղերի մէջ ներկայումս փայլող արական եւ օրիորդական դպրոցները, ժամանակակից պիտոյքների եւ պահանջման եթէ ոչ լիամասն յարմար եւ համընթաց, գէթ հետեւող եւ ճիգն թափող նորան հասնելու: